«ԵՐԵՎԱՆԻ ԼԵՈՅԻ ԱՆՎԱՆ Հ. 65 ԱՎԱԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑԻ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Առարկա – ՆԶՊ և ԱԿ

Մասնակից – Երևանի Ս.Գևորգյանի անվան հ.189 ավագ դպրոցի զինղեկ՝

Փ-գ Գասպարյան Կարապետ

Թեմա – «Ընդհանուր մարտավարության դասավանդման մեթոդներն ու խնդիրները»

ԵՐԵՎԱՆ-2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն.....3

Գլուխ.1 Ընդհանուր մարտավարության դասավանդման մեթոդներն ու խնդիրները

1.1«ՆԶՊ» ուսումնական առարկայի կրթադաստիարակչական նշանակությունը հանրակրթական դպրոցում.....6

1.2 Ընդհանուր մարտավարության դասավանդման մեթոդներն ու խնդիրները «ՆԶՊ» առարկայի դասավանդման ընթացքում.....13

Եզրակացություններ և առաջարկություններ.....17

Օգտագործված գրականության ցանկ.....19

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

> Երիտասարդների պատշաճ կրթությունը նրանց գլուխը բառերից, նախադասություններից և տարբեր հեղինակներից քաղված մտքերից բաղկացած զանգվածով լցնելը չէ, այլ նրանց հասկացողությունը արտաքին աշխարհին բացելը, այնպես, որ գործող ալիքը կարողանա ծնվել իրենց իսկ մտքերից, ինչպես տերևները, ծաղիկները և մրգերն են ընձյուղվում ծառի վրայի բողբոջից:
>
> *Յան Ամոս Կոմենսկի*

Ինչպես հայտնի է, հանրակրթության գլխավոր նպատակը սովորողների մտավոր, հոգևոր, ֆիզիկական և սոցիալական ունակությունների համակողմանի ու ներդաշնակ զարգացումն է: Այսինքն՝ նրանց համար անհրաժեշտ գիտելիքների, կարողությունների և հմտությունների ձևավորումն ու զարգացումը: Հանրակրթության նոր չափորոշիչները սահմանում են մի շարք կարողունակություններ, որոնք սովորողներին թույլ կտան ավելի մատչելի ու բովանդակային ընկալել ուսումնական նյութը, դրա շուրջ ձևավորել քննադատական մտածողություն, նյութի առնցքային գաափարը վերլուծելու, գործնական հմտությունների հետ կապակցելու կարողություններ: Այս համատեքստում ուսուցիչը կարող է բախվել մի շարք խնդիրների, ուստի ուսումնական առարկայի համար սահմանված կրթական չափորոշչային վերջնարդյունքին հասնելու համար անհրաժեշտ է, որ ուսուցիչը ևս անպայման համապատասխանի նոր մարտահրավերներով պայմանավորված պահանջներին՝ լինի ստեղծագործ, նորարար, ունենա մարդասիրական մղումներ, մասնագիտական ու մարդկային բարձր որակներ:

Մատաղ սերնդի դաստիարակությունը ուսումնական գործընթացի բաղադրիչներից է: Հենց դաստիարակչական գործընթացի արդյունավետ իրականացումը «ՆԶՊ»-ի առանցքային խնդիրներից է: Դաստիարակության սկզբունքները իրենց բազմազանության մեջ ներառում են ուսուցիչների մանկավարժական ազդեցության և փոխազդեցության հետ մեկտեղ նպատակաուղղված ազդեցություն երեխաների ողջ կյանքի ընթացքում: Երեխայի գիտակցությունը ձևավորվում է աստիճանաբար, կյանքի ընթացքում և առաջին հերթին կյանքի միջոցներով: Հետևաբար, մանկավարժին, դաստիարակության մեջ դրական արդյունքի

հասնելու համար, պետք է ոչ միայն ուղղակի ազդեցության սկզբունքներ, այլև անուղղակի, միջնորդավորված, երկարատև գործողության սկզբունքներ, գիտակցության և սովորական վարքագծի վրա, մանկական կյանքի բոլոր ոլորտների նպատակային և հոգևոր հագեցվածության միջոցով:

«ՆԶՊ»-ի դասավանդման շրջանակներում տեսանելի ու կարևոր է մասնավորապես ռազմահայրենասիրական դաստիարակության նշանակությունը: Առարկայի ծրագիրը սովորողներին թույլ է տալիս ուսումնասիրել ինչպես հայոց բազմադարյան պատմության հաղթական էջերը, այնպես էլ ծանոթանալ, մարտավարության սկզբունքների, ժամանակակից զինատեսակներին, հարևան պետությունների բանակներին, դրանց կառուցվածքին ու զինեխնիկային: մեր երկրի համար մարտահրավերներով լի այս պատմական ժամանակաշրջանում, հիրավի, այս գիտելիքները ու դրանց վրա ձևավորվող կարողություններն ու հմտությունները կրթական համակարգում օրապահանջ են:

Այսպիսով, հանրակրթական դպրոցում սովորողների դաստիարակության, արժեքային համակարգի և կամային բարձր հատկանիշների ձևավորման տեսանկյունից անգնահատելի մեծ է զինղեկի աշխատանքը: Ուստի և նրա զինվորական կերպարը, խստաբարո պահվածքը, պահանջկոտությունը պետք է կարգուկանոն ստեղծի ողջ դպրոցում՝ մեծացնելով սովորողների զգոնությունն ու հարգանքը դպրոցի, հայրենիքի նկատմամբ: Իսկ ահա մասնագիտական մի շարք գիտելիքների հաղորդումը՝ այդ թվում մարտավարության վերաբերյալ, կարող է զարգացնել սովորողների ճանաչողությունը, մտածողությունն ու աշխարհայացքը:

<u>Հետազոտության թեմայի արդիականությունը՝</u> թեմայի արդիականությունը պայմանավորված է կրթական համակարգի բարեփոխումների արդի շրջափուլում կրթական չափորոշիչներով սահմանված վերջնարդյունքներով, որոնց մեջ կարևորվում է սովորողների ինքնուրույնությունն ու գործնական կարողությունները, ակտիվ մասնակցությունը դասին:

<u>Հետազոտության նպատակը:</u>

1. Ուսումնասիրել ուսուցչի կողմից կիրառվող մանկավարժամեթոդական հնարները, մասնագիտական որակները, որոնք կարող են նպաստել «ՆԶՊ»-ի դասաժամին ուսուցանվող նյութի խորքային ընկալմանն ու գործնական կարողությունների ձևավորմանը:

2. Հետազոտել առարկայի դասավանդման շրջանակներում ընդհանուր մարտավարության դասավանդման արդյունավետ եղանակներն ու մեթոդները:

Հետազոտության խնդիրը:

1. Ուսումնասիրել «ՆԶՊ»-ի դասին կիրառվող հնարավոր մեթոդներն ու դրանց ազդեցությունը կրթության որակի բարելավման վրա:
2. Բացահայտել առարկայի դասավանդման առանձնահատկություններն ու դաստիարակչական նշանակությունը:

Աշխատանքի կառուցվածքը:

Սույն աշխատատանքը կազմված է մեկ գլխից, որն ունի 2 ենթագլուխ, եզրակացությունից, առաջարկություններից և գրականության ցանկից:

ԳԼՈՒԽ 1 ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱՐՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

1.1 «ՆԶՊ» ուսումնական առարկայի կրթադաստիարակչական նշանակությունը հանրակրթական դպրոցում

Կրթության և դաստիարակության գործընթացում ինքնուրույն, նախաձեռնող և յարողունակ անհատականության զարգացումը ժամանակակից կրթական համակարգի կարևոր խնդիրներից մեկն է: Որպես կրթության բարձրագույն նպատակ՝ կարելի է դիտարկել ինքնազարգացող անհատականության ձևավորումը, ով ունակ է համագործակցել հասարակության հետ, իր գիտելիքներն օգտագործել՝ ի շահ երկրի բարգավաճման ու զարգացման: Սա նաև հանրակրթության նկատմամբ պետության տեսակետն է: Հանրակրթության նպատակների և պետական քաղաքականության սկզբունքների բաղադրամաս է նաև՝ «Ուսումնական հաստատություններում ստեղծագործական աշխատանքի խթանումը, սովորողների վերլուծական, քննադատական մտածողության, գիտելիքների ինքնուրույն ձեռք բերման և կիրառման, տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործման ունակությունների զարգացման առաջնայնությունը»[1]:

Հանրակրթական ուսումնական հաստատությունում յուրաքանչյուր ուսումնական առարկայի դասավանդման շրջանակներում ուսուցիչն իրականացնում է նաև դաստիարակչական բնույթի աշխատանքներ:

Դաստիարակությունը մանկավարժական գիտության հիմնական կատեգորիա է: Անձը դաստիարակվում է անընդհատ, նրա անձը ձևավորվում է ողջ կյանքի ընթացքում մի շարք գործոնների ազդեցության ներքո: Ընդ որում՝ այս գործընթացում մարդը հանդես չի գալիս որպես պասիվ էակ, այլ գործում է որպես իր սեփական ձևավորման և զարգացման սուբյեկտ: Մանկավարժության հիմնախնդիրներից մեկը կայանում է նրանում, որ հասնենք մարդկանց վրա կանխամտածված, նպատակային դաստիարակչական ազդեցությունների առավելագույն արդյունավետության բարձրացմանը, թուլացնենք արտաքին միջավայրի բացասական և անբարենպաստ

[1] https://www.arlis.am/documentview.aspx?docID=140362 ՀՀ Հանրակրթության մասին օրենք, հոդված 5,կետ 4:

ազդեցությունները: Անշուշտ, դպրոցում սովորողին դաստիարակելու, լավ օրինակներ մատնացույց անելու գործընթացը արդյունավետ է լինում միայն այն ժամանակ, երբ նրա մասնակիցների փոխգործակցությունը հանգեցնում է նպատակների գործնական ձեռքբերման՝ հատուկ ընտրված միջոցների օգնությամբ:

Ժամանակակից մանկավարժությունը ելնում է այն բանից, որ դաստիարակության գործընթացը արտացոլում է ոչ թե ուղղակի ազդեցություն, այլ սոցիալական փոխազդեցություն մանկավարժի և աշակերտի միջև, նրանց զարգացող փոխհարաբերություններ: Դաստիարակության մեթոդները և սկզբունքները սերտորեն փոխկապակցված են ուսուցման սկզբունքների հետ: Իհարկե սկզբունքների այս երկու խմբերը իրար հետ կապված են, բայց այնուամենայնիվ նրանց միջև կան որոշակի տարբերություններ, քանի որ այդ սկզբունքներից յուրաքանչյուրն ունի իր առանձնահատկությունը, որն ընդհանուր առմամբ բխում է ուսուցման և դաստիարակության գործընթացների առանձնահատկություններից:

Կարող ենք պնդել, որ ՆԶՊ-ի դասավանդման շրջանակներում նույնպես անհրաժեշտ է ուսումնական թեմաների դասավանդմանը զուգահեռ իրականացնել դաստիարակչական բնույթի աշխատանքներ՝ ձևավորել ազգային ավանդույթների և հաղթանակների նկատմամբ հարգանք, արմատավորել բարեվարքության և հարգանք հայրենիքի, ծնողի նկատմամբ, սերմանել բարություն, ազնվություն, պատասխանատվության և երախտագիտության զգացումներ:

«ՆԶՊ» ուսումնական առարկայի դասավանդման ընթացքում զինղեկը լուծում է հետևյալ հիմնախնդիրները՝

- նպաստել հոգեպես հարուստ և սոցիալապես ակտիվ կեցվածքով հայ քաղաքացու ձևավորմանը,
- սովորողների մեջ սերմանել հանդուրժողական և հարգալից վերաբերմունք շրջապատի նկատմամբ,
- յուրաքանչյուր սովորողի մոտ արմատավորել սեփական ազգի պատմության ու պետության կայացման գործում իր մասնակցության կարևորությունն ու դրա իրական հնարավորությունը,
- նպաստել դպրոցում բարոյահոգեբանական առողջ մթնոլորտին,
- կառավարել դեռահասների անկանոն վարքագիծը,

- խրախուսել սովորողների ինքնանդրադարձ կատարելու կարողությունը, լավ օրինակների ցուցադրմամբ հնարավորություն ստեղծել սովորողների համար սեփական սխալները գիտակցելու,
- նպաստել դպրոցում հայրենասիրական դաստիարակության համակարգի կայացմանը, դրա արդյունավետ գործունեության մշտական կատարելագործմանը,
- ծանոթացնելու սովորողներին ռազմական գործին, հարևան պետությունների բանակային ու ռազմական առանձնահատկություններին, կարողություններին:

Դաստիարակության սկզբունքներն արտացոլում են հասարակության զարգացման մակարդակը, նրա պահանջներն ու անձի որոշակի տեսակի վերարտադրության պահանջները, սահմանում են նրա ռազմավարությունը, նպատակները, բովանդակությունը և դաստիարակության մեթոդները, դրա իրականացման ընդհանուր ուղղությունը, դաստիարակության սուբյեկտների փոխգործակցության ոճը[2]: Դաստիարակչական աշխատանքը՝ որպես շարունակական և երկարատև գործընթաց, բավական ընդգրկուն է: Հանրակրթական դպրոցներին ներկայացվող ժամանակակից պահանջների իրականացումը նոր խնդիրներ է առաջադրում ուսումնական առարկաների դասավանդման ընթացքում: Հանրակրթական դպրոցի գործող ծրագրերում և չափորոշիչներում հատուկ ուշադրությունն է դարձվում ուսումնական գործընթացի այնպիսի կառուցմանը, որը ապահովում է ոչ միայն գիտելիքների ձեռքբերումը, այլ նաև սովորողների մոտ առարկաների, երևույթների, արժեքների ընկալման, վերլուծման, ընդհանրացման գործընթացների ձևավորումը և, ամենակարևորը, գործնականում այդ գիտելիքների կիրառումը:

Հենց ուսուցիչն է մարմնավորում դաստիարակչական գործընթացի միասնությունն ու ամբողջականությունը, ապահովում նրա բոլոր մասերի համաձայնեցված լինելը և դրա սկզբունքների հետևողական կիրառումը: Ուսուցչի անձնական օրինակը դաստիարակչական ազդեցության ամենաարդյունավետ միջոցն է: Իհարկե, պետք է նշել, որ դաստիարակչական գործընթացը ենթադրում է նաև հենց սովորողների ակտիվություն, սակայն այդ ակտիվության կազմակերպիչը, ինչպես և ողջ դաստիարակչական գործընթացը, որի սուբյեկտը միշտ մնում է մանկավարժը, իսկ

[2] Лихачев Б.Т. Педагогика: курс лекций / Б.Т. Лихачев; под ред. В.А. Сластенина. — М .: Гуманитар, изд. центр ВЛАДОС, 2010. — с. 125

աշակերտները նրա համեմատ մնում են դաստիարակության ավելի պասիվ օբյեկտներ: Դա է պատճառը, որ ուսուցչին ներկայացվում են բարձր մասնագիտական պահանջներ:

Ուսուցիչն է կազմակերպում սաների ակտիվության բոլոր տեսակները, նրանց ուսումը, աշխատանքը, գործունեության բոլոր տեսակները, սահմանում առաջադրանքների, վարժությունների ծավալն ու կարգը, դրանց կատարման ժամկետները, ապահովում է յուրաքանչյուր խնդրի լուծման կազմակերպչական և նյութական հնարավորությունը, իրականացնում է մշտական օգնություն ուսման, աշխատանքի մեջ, աշխատանքի քանակի և որակի վերահսկում և գնահատում, նյութապես և բարոյապես խթանում է ծախսված ջանքերը: Բայց այդ սկզբունքից այս կամ այն նահանջի կամ դրանց խախտումների անթույլատրելիությունը բխում է նաև ուսուցչի դաստիարակության սկզբունքներից: Օրինակ՝ աշակերտներից ոմանց նկատմամբ թողտվությունը և ուրիշների նկատմամբ կողմնակալ վերաբերմունքը: Այս և դրա նման խախտումները խաթարում են ուսուցչի հեղինակությունը և անուղղելի վնաս են հասցնում ոչ միայն դաստիարակչական գործունեությանը, այլև ամբողջ աշխատանքային կամ ուսումնական կոլեկտիվին:

Հայաստանն այսօր կանգնած է մեծագույն վտանգների առջև, ուստի «ՆԶՊ»-դասավանդման շրջանակներում զինղեկը պետք է կարևորի բարեփոխումների անհրաժեշտությունը և դրանցում իր մասնակցության կարևորությունը, ձեռք բերի ու զարգացնի անհրաժեշտ պատրաստվածություն, որը թույլ կտա կառավարելի դարձնել դասարանը, հաղորդել արժանահավատ գիտելիքներ, ձևավորել արժեհամակարգ: «Հանրակրթական դպրոցի ուսուցիչը պարտավոր է. հետևողականորեն կատարելագործել իր առարկայական և մասնագիտական գիտելիքներն ու հմտությունները, իրականացնել ստեղծագործական և հետազոտական աշխատանքներ[3]»:

Կրթության որակի բարձրացման, սովորողի մեջ առաջնային կարողությունների ձևավորման համար կարևոր է նաև կրթության բովանդակությունը: Կրթության բովանդակությունը նորմատիվային փաստաթղթերի, ուսումնական նյութերի ամբողջություն է, որի մեջ ամփոփված է ի՞նչ ենք սովորեցնում հարցը: Այդ հարցը հատկապես էական է դառնում արագ փոփոխվող աշխարհում, քանի որ ժամանակի

[3] https://www.arlis.am/documentview.aspx?docID=74345 ՀՀ հանրակրթության մասին օրենք, հոդված 27, կետ 5:

պահանջներին չհամապատասխանող բովանդակությունը չի կարող մոտիվացնել այսօրվա սովորողին[4]:

Հաշվի առնելով առարկայի առանձնահատկությունները՝ կարծում ենք, որ զինղեկը լայն հնարավորություններ ունի առարկայի ընթացքում հետաքրքրել սովորողին, ուսուցման գործընթացը կապել կյանքի իրավիճակների հետ: Առանցքային նշանակություն ունեն նաև ուսումնական առարկայի շրջանակներում իրականացվող արտադասարանական դասերն ու գործնական պարապունքները: «ՆԶՊ» առարկայի ուսուցումը ուղղված է նաև հատուկ վարժանքներով սովորողների բարոյահոգեբանական հատկանիշների ձևավորմանն ու ուժեղացմանը (հայրենասիրություն, կարգապահություն, պատասխանատվություն, ինքնավստահություն, կոլեկտիվիզմ), որոշակի ունակությունների զարգացմանը և նոր կարողությունների առաջացմանը (ֆիզիկական ունակություններ, ֆիզիոլոգիական հատկանիշներ, հիշողության, ուշադրության կենտրոնացում ու փոխատեղում, վերլուծական մտածողություն)[5]:

ՆԶՊ առարկայի դասավանդման խնդիրներից է նաև սովորողների մեջ խնդիրները հաղթահարելու ունակությունների ձևավորումն է, ինքնավերահսկվող, ինքնազարգացող մարդ, քաղաքացի կերտելն է: Բնականաբար, մարդու ձեռք բերած գիտելիքները կարողություններն ու հմտությունները, նրա ստեղծագործական պոտենցիալը ամենից առաջ ծառայում են իր ժողովրդի ու հայրենիքի պահանջներին: Ահա այս գիտակցումն է, որ հարկավոր է արմատավորել սովորողների աշխարհայացքի մեջ: Ժամանակակից մանկավարժությունը կրթական գործընթացում տարբերակում է երկու սուբյեկտ: Ուսուցման ընթացքում թե' ուսուցիչը, թե' աշակերտը փոխգործուն հարաբերությունների մեջ են, այսինքն՝ ընդունված սուբյեկտ–օբյեկտ գծապատկերին փոխարինում է սուբյեկտ–սուբյեկտ ժամանակակից գծապատկերը[6]:

Ինտերակտիվ ուսուցումը սովորողին դարձնում է կրթական համակարգի գործընկերային կողմ: Այսպես սովորողը պասիվ ակտիվ է, հնարավորություն ունի կարծիք հայտնելու, վերլուծելու, հիմնավորելու, փաստարկելու: կրթական նման

---

[4] https://www.moj.am/storage/uploads/00.Ardir_6.pdf Ուսուցիչների մասնագիտական զարգացման և կրթության բովանդակության գնահատումը՝ ՀՀ հանրակրթության բարեփոխումների համատեքստում, Երևան 2013, էջ 13:

[5] https://escs.am/am/news/7884 ՀՀ ԿԳՄՍ պաշտոնական կայք:

[6] Վ. Զաքարյան, Հ. Ափյան, Մանկավարժական միտք, Բազմաբնույթ մտածողության տեսության կիրառության հնարավորությունը ուսուցման գործընթացում,Երևան, 2014, էջ12:

մոտեցումը, որի շրջանակներում խրախուսվում է կարողունակությունների զարգացումը, թույլ է տալիս, որ սովորողն ինքը հետազոտի, փնտրի, գտնի ու վերլուծի երևույթի դրական ու բացասական կողմերը: Ինքնուրույն դատողությունների կատարումը նպաստում է պատասխանատու անձնավորության ձևավորմանը: ՆԶՊ առարկայի դասավանդման շրջանակներում ուսուցիչը հաճախ է ստեղծում միջառարկայական կապեր այլ առարկաների հետ: Այս կերպ ուսուցչի՝ դաստիարակելու կարևորագույն առաքելությունը ավելի ակնառու է դառնում սովորողների համար: Ֆիզիկայի, աշխարհագրության ու պատմության հետ միջառարկայական կապերի ստեղծումը ՆԶՊ առարկայի դասավանդման ընթացքում զարգացնում է սովորողների մետաճանաչողությունն ու գործնական կարողությունները, դաստիարակում հարգանք աշխատանքի նկատմամբ: Ռազմադաշտային պարապմունքների ընթացքում այդ կապերն առավել ցայտուն ու առարկայական են, քանի որ սովորողները անմիջապես շփվում են բնության հետ, սովորում հաղթահարել դժվարությունները, ծանոթանում են տեղանքին, այդտեղ առկա պատմամշակութային վայրերին:

«ՆԶՊ» առարկայից գործնական դասերը սովորողների մեջ զարգացնում են մի շարք կարողություններ, որոնցից են.

- զինվորական պատրաստության հիմունքների վերաբերյալ գիտելիքների խորացումն ու համակարգումը,
- մարտական և այլ արտակարգ իրավիճակներում անհրաժեշտ կարողությունների ձեռքբերում և հմտությունների զարգացում, գիտելիքների յուրացում և ոլորտի տարբեր կողմերի վերաբերյալ ընդհանուր պատկերացումների ձևավորում,
- հայրենիքի պաշտպանությանը միտված՝ սովորողների մասնագիտական կողմնորոշում (ռազմական, ռազմատեխնիկական, ռազմաարդյունաբերական, տեղեկատվական անվտանգության, ռազմական բժշկության, արտակարգ իրավիճակներ),
- ռազմագիտական երևույթները բացատրելու և տարբեր բնագավառներում կիրառելու, սեփական գործունեության հետևանքները կանխատեսելու կարողությունների և հմտությունների զարգացումը,

- կրթությունը ռազմական ուղղությամբ շարունակելու համար անհրաժեշտ հիմքերի ապահովումը[7]:

ՆԶՊ առարկայի դասավանդումը շատ կարևոր է նաև բանակ-դպրոցական կապի ամրապնդման տեսանկյունից: Զինղեկը բազմիցս դասը վարում է դասարանից դուրս: Այս համատեքստում վերջիններս ծանոթանում են ինքնաձիգի կառուցվածքին, օգտագործմանն ու անվտանգային խնդիրներին, մասնակցում են հրաձգության պարապունքներին, սովորում են շարային պատրաստության հիմնական կանոնները: «ՆԶՊ» առարկայի դասավանդումը կարևորագույն խնդիր է լուծում՝ նախազորակոչային տարիքի պատանիներին նախապատրաստելով զինվորական ծառայության, ինչպես նաև նպաստում է ֆիզիկապես և բարոյապես առողջ, բազմակողմանի զարգացած երիտասարդներ դաստիարակելուն:

Այսպիսով, հանրակրթական ուսումնական հաստատություններում մատաղ սերնդի կրթության և դաստիարակության գործում կարևոր դեր ունի ՆԶՊ-ն: Մեծ է առարկայի նշանակությունը հատկապես սովորողների հայրենաճանաչության բարձրացման և ռազմահայրենասիրական դաստիարակության գործում:

[7] https://escs.am/files/files/2021-05-06/114a72e4ebca1a68bcd63c2e091ccc9f.pdf ՆԶՊ առարկայի փորձնական չափորոշիչ և ծրագրեր, (8-12-րդդասարաններ):

1.2 Ընդհանուր մարտավարության դասավանդման մեթոդներն ու խնդիրները «ՆԶՊ» առարկայի դասավանդման ընթացքում

«ՆԶՊ»- ի դասավանդման շրջանակներում սովորողները ծանոթանում են ընդհանուր մարտավարությանը: Մարտավարությունը ռազմական արվեստի բաղկացուցիչ մասն է, որն ընդգրկում է ստորաբաժանումների և զորամասերի տեսական հմունքներով մարտին պատրաստվելու ու գործնականում այն վարելու կարողությունների ամբողջությունը: Մարտավարության տեսությունն ուսումնասիրում է մարտի օրինաչափությունը, էությունը և բնույթը, մշակում է մարտի նախապատրաստման և վարելու եղանակները, մարտական ստորաբաժանումների և զորամասերի մարտական հնարավորություններն ու առանձնահատկությունները:

Ռազմական գործը և զինվորական պատրաստությունը մարդկության պատմության ձևավորման հետ միասին սկսել է գոյություն ունենալ, իսկ «Նախնական զինվորական պատրաստություն»-ը, որպես առարկա մեր իրականաության մեջ կյանքի է կոչվել 20-րդ դարիսկզբներին: «Նախնական զինվորական պատրաստություն» առարկան հնարավորություն է տալիս ձևավորելու մտածող, քաջ և հայրենիքի պաշտպանությանը պատրաստ քաղաքացի: Հանրակրթական դպրոցում «ՆԶՊ» առարկայի ուսումնական ծրագիրը կառուցվում է հիմնարար գաղափարների հենքի վրա պարուրաձև սկզբունքով՝ հիմնական դպրոցում սատացած գիտելիքները ընդլայնվում և խորացվում է ավագ դպրոցում: Հիմնարար գաղափարների շուրջ առարկայի ծրագրի կառուցումը հնարավորություն է ընձեռում արդյունավետ ապահովելու ներառարկայական և միջառարկայական կապերը՝ նպաստելով զինվորական պատրաստության, առաջին օգնության և անվտանգ կենսագործունեության հիմունքների վերաբերյալ համակարգային պատկերացումների ձևավորմանը[8]:

Հանրակրթական հիմնական ծրագրի «ՆԶՊ» առարկայի շրջանակներում մարտավարության ուսումնասիրման ընթացքում սովորողներից ակնկալվող վերջնարդյունքներն են՝

[8] «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի փորձնական չափորոշիչ և ծրագրեր, (8-12-րդասարաններ):

- Պատկերացում ունենալ «Ռազմարվեստ» հասկացության մասին, իմանալ հին դարերում հայկական բանակի կառուցվածքը, հայկական և հինաշխարհի հայտնիզորավարների կիրառած մարտավարական հնարքները: Կարողանալ նկարագրել ՀՀ ԶՈՒ հիմնական գործառույթները, նրա առանձին զորատեսակները և դրանց ստորաբաժանումները, ձևավորել (փորել) զինվորի անհատական խրամատ:
- Ունենել տարրական կարողություններև հմտություններ հրաձության տարրերից (դիրքավորում, դիրքերիփոփոխում, տեղաշարժ): Կարողանալ սպորտային ներքնակի վրա կատարել գլորումներ (գլորվել դեպի առաջ, աջ և ձախ), սողեսող տեղաշարժ: Գիտենալ մարտավարական անհատական հիմնական հատկանիշները, ձևերն ու միջոցները, մարտական պայմաններում ինքնաձիգը կրելու առանձնահատկությունները և տիրապետել դրա հիմնական ձևերին:
- Գիտենալ ՀՀ ԶՈՒ-ում կիրառվող հրաձգային զենքի հիմնական տեսակները՝ տալով դրանց նշանակությունը: Իմանալ ԱԿՄ (ԱԿ-74) ինքնաձիգի մասերի ու մեխանիզմների նշանակությունն ու աշխատանքը, պահպանման և անվտանգության կանոնները: Կարողանալ ըստ նորմատիվների ինքնաձիգը ոչ լրիվ քանդել-հավաքել: Իմանալ կրակոցի երևույթը և պատսպարված, խոցելի և «մեռյալ» տեղամասերը:
- Իմանալ տեղանքի տարատեսակները և դրանց մարտավարական հատկանիշները, հորիզոնիկողմերի որոշման նշանակությունը: Կարողանալ հորիզոնի կողմերը որոշել կողմնացույցի օգնությամբ, երկնային լուսատուներով, տեղանքի բնական միջոցներով և բնության այլ երևույթներով: Գիտենալ տեղագրական քարտեզը ըստ կոնկրետ մասշտաբների: Կարողանալ առանձնացնել բնական և արհեստական առարկաների պայմանական նշանները և տեղանքում կողմնորոշել տեղագրական քարտեզը:
- Կարողանալ որոշել տեղանքի կոնկրետ առարկայի մագնիսական ազիմուտը կողմնացույցով (սմարթֆոնով), որոշել տեղանքի առարկայից եղած հեռավորությունը տարբեր եղանակներով: Կարողանալ կազմել տեղանքում տեղաշարժի երթուղու սխեման ըստ շրջադարձային կողմնորոշիչների, դրանց

մագնիսական ազիմուտների և եղած հեռավորությունների, տեղաշարժվել դրանցով՝ ընտրելով նաև միջանկյալ կողմնորոշիչներ[9]:

Մարտավարության դասավանդման համար առանցքային նշանակություն ունի սովորողների իմացությունը ՀՀ բանակաշինության ռահվիրաներին: Սա անչափ կարևոր հանգամանք է: Խոսելով թեմայի դասավանդման մեթոդներից՝ կցանկանանք առանձնացնել ինտերակտիվ ուսուցումը՝ որպես սովորողների ինքնուրույնության գրավական: Դասի ժամանակ ավանդական՝ զննական, բացատրական, մեթոդների զուգադրումը ժամանակակից մեթոդական համակարգի հետ թույլ է տալիս, որ սովորողը ուսուցման ակտիվ ճանաչողական և պրակտիկ գործունեության ընթացքում ավելի հասանելի կերպով ընկալի գիտելիքը հմտությունն ու, կարողությունը: Այսօրինակ մոտեցումը նախատեսում է ոչ թե ուսուցչի կողմից պատրաստի գիտելիքի մատուցում, մտապահում և վերարտադրություն, այլև ուսուցման ակտիվ պրակտիկ միջավայրի ստեղծում:

Փաստորեն, ակտիվ մեթոդները՝ այդ թվում խմբային քննարկումները, համագործակցային ինտերակտիվ մեթոդները, նպաստում են սովորողի խոսքային մշակույթի զարգացմանը, ակտիվության բարձրացմանը և դրական ազդեցություն են ունենուն սովորողների թիմում աշխատելու կարողության ձևավորման վրա: Սովորողին լսելու, նրա հետաքրքրությունների շրջանակին ծանոթանալու եղանակներից է դասի ընթացքում խմբային քննարկումներ իրականացնելը: Այս եղանակով ուսուցիչը նաև նպաստում է սովորողի լեզվամտածողության զարգացմանը, քանի որ քննարկումների ընթացքում սովորողներն առավել ակտիվ են՝ հարցնում են, պատասխանում, բանավիճում:

Անչափ կարևոր է սովորել սովորելու կարողունակությունը, որը ենթադրում սովորողներն ինքնուրույն և մյուսների հետ համատեղ արդյունավետ սովորում և աշխատում են կյանքի տարբեր իրավիճակներում: Նրանք ճանաչում են իմացածի և չիմացածի սահմանները: Սովորողները ինքնակազմակերպվում են և ձևավորում են ժամանակի արդյունավետ կառավարման հմտություն: Նրանք կարողանում են գնահատել սեփական և մյուսների ֆիզիկական ու հոգեբանական հնարավորությունները, սովորում են աշխատել ծանրաբեռնվածության պայմաններում:

[9] «Նախնական զինվորական պատրաստություն» առարկայի փորձնական չափորոշիչ և ծրագրեր, (8-12-րդ դասարաններ):

Սովորելու ընթացքում աշակերտները ձևավորում են իրողությունները քննադատաբար և բազմակողմանի ուսումնասիրելու, վերլուծելու, ինչպես նաև ստեղծագործական ու նորարար մոտեցումներ կիրառելու ունակություններ: Սովորողները ձևավորում են համակարգային և ինտեգրված մտածողություն[10]:

Ստացվում է, որ կարողունակություններին ուղղված դասրի շրջանակներում սովորողնունի ինքնազարգանալու լայն հնարավորություններ: Եթե ավանդական ուսուցումն ու դրա մեթոդները ինչ-որ առումով սահմանափուկում էին սովորողի մասնակցությունը բուն դասապրոցոսի այս կամ այն հատվածում, ապա ինտերակտիվ, աշակերտակենտրոն ուսուցումը սովորողին հնարավորություն է տալիս լինել դասապրոցեսի կիզակետում՝ բանավիճել, երկխոսել, հետազոտել, կիրառել, ՏՀՏ գործիք, այլ խոսքով՝ դուրս գալ կաղապարներից ու կարմիր գծերից՝ դասից քաղելով առավելագույն գիտելիք, հմտություն: Այս համատեքստում բնավ չենք ստվերում ուսուցչակենտրոն ուսուցումը, այդուհանդերձ, հարկ է արձանագրել, որ հետազոտող աշակերտն էլ ավելի մոտիվացված է ազատ դասի ժամանակ: Մարտավարության ուսուցման շրջանակներում շատ կարևոր են ռազմադաշտային գործնական պարապմունքները, որոնց ընթացքում սովորողները սովորում հաղթահարել դժվարությունները, ծանոթանում են տեղանքին, կատարում զանազան գործնական առաջադրանքներ:

Այսպիսով, կարող եմ արձանագրել, որ ՆԶՊ-ի ուսուցումը հանրակրթական դպրոցում կարող է ունենալ բարձր արդյունավետություն, եթե ուսուցումը զուգորդվում է ակտիվ մեթոդական հնարներով: Իհարկե, ավանդական եղանակով նույնպես կարելի է վարել դասը, այնուամենայնիվ, հաշվի առնելով ժամանակակից սովորողների պահանջմունքները, կարծում եմ, որ ավելի շատ պետք է լսելի լինի հենց նրանց խոսքը, իրենք պետք է բացահայտեն այս կամ այն հմտությունը, կարողությունն ու գիտելիքը:

[10] https://www.arlis.am/documentview.aspx?docid=149788 ՀՀ կառավարություն որոշում 4 փետրվարի 2021 թվականի n 136-ն ՀՀ կառավարության 2010 թվականի ապրիլի 8-ի n 439-ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հանրակրթական ուսումնական հաստատություններում ՆԶՊ առարկայի շրջանակներում սովորողների ուսուցման և դաստիարակության գործում մեծ է զինղեկի դերակատարումը: Զինղեկը, ով իր մարդկային կերպարով, հայրենասիրական գաղափարներով, զինվորական պահանջկոտությամբ և կարգապահությամբ օրինակելի սովորողների համար, պետք է նպաստի ամբողջ դպրոցում դաստիարակչական բնույթի լրջագույն մարտահրավերները բացառելու համար, ինչպես նաև անձնական օրինակով մեծ դեր է խաղում սովորողների և մանկավարժական կոլեկտիվի կարգապահության ամրապնդման և բանակ-հասարակություն կապերի սերտացման գործում:

Կրթության զարգացման գլխավոր նպատակն է կրթական այնպիսի համակարգի ձևավորումը, որը յուրաքանչյուր քաղաքացու կյանքի բոլոր փուլերում հնարավորություն է տալիս ստանալ իր պահանջմունքներին, մտավոր կարողություններին ու ձգտումներին համապատասխան որակյալ կրթություն, բավարարում է տնտեսության ու հասարակության պահանջները, լիարժեք ծառայում է ազգային շահերին: Հենց այս ուսումական առարկան իր բովանդակությամբ և չափորոշչային վերջարդյունքների սահմանված պահանջներով ունակ է ընդհանուր մարտավարության դասավանդման ժամանակ սովորողների համար լինել օրինակելի ու հայրենասեր քաղաքացի դաստիարակելու արդյունավետ միջոց: Անդրադառնալով դասավանդման եղանակներին՝ կցանկանանք վերահաստատել մեր այն պնդումը, որ ծավալուն ու երկար շարադրանքը, ուսուցչակենտրոն ուսուցումը ոչ միշտ է հանգեցնում ընդհանուր մարտավարության թեմայի վերջնարդյունքներին, որոնք սահմանված են կրթության պետական չափորոշչով, ուստի կարծում եմ՝ պետք է վերանայել սովորողի դերը դասի ընթացքում: Կարևոր ենք համարում նաև այն միջավայրը, որում աշակերտը իրեն ապահով ու հանգիստ կզգա, հետևաբար ստացած գիտելիքը կարող է հեշտությամբ ընկալվել ու մնայուն դառնալ: Անշուշտ, թվարկածս հմտություններն ու կարողությունները սովորողը ձեռք կբերի այն պարագայում, երբ ուսուցիչը ճիշտ ու կառուցողական է վարում ընդհանուր մարտավարության դասը՝ հաշվի են առնված սովորողների անհատական պահանջմունքները, դասը հագեցած է դիդակտիկ նյութերով ու զննական պարագաներով, դասին կիրառվում են մի շարք ակտիվ մեթոդներ, որոնք կարող են ոգևորել սովորողին ու պահել ակտիվ դաշտում:

Առարկայի նկատմամբ սովորողների հետաքրքրությունը բարձրացնելու համար առաջարկում ենք ավելի հաճախ կազմակերպել ինտեգրված դասեր Նզպ-ի և այլ ուսումնական առարկաների՝ պատմության, աշխարհագրության, մաթեմատիկայի, ինֆորմատիկայի հետ միջառարկայական կապերի օգտագործմամբ: Բացի դա՝ կարելի է հաճախակի սովորողներին տանել էքսկուրսիաներ, դասը անցկացնել բնության գրկում, այցելել զորամասեր: Կարծում ենք, որ այս բազմազանությունը թույլ կտա սովորողներին ավելի հետաքրքրությամբ մասնակցել դասին, կբարձրանա նրանց հայրենասիրությունը և կնդլայնվեն գիտելիքները հայոց բանակի, հայրենիքի ու մեր հաղթանակների մասին:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. https://www.arlis.am/documentview.aspx?docID=140362

ՀՀ Հանրակրթության մասին օրենք, հոդված 5,կետ 4:

2. https://www.moj.am/storage/uploads/00.Ardir_6.pdf

Ուսուցիչների մասնագիտական զարգացման և կրթության բովանդակության գնահատումը՝ ՀՀ հանրակրթության բարեփոխումների համատեքստում, Երևան 2013:

3. https://escs.am/am/news/7884 ՀՀ ԿԳՄՍ պաշտոնական կայք:

4. Վ. Զաքարյան, Հ. Ափյան, Մանկավարժական միտք, Բազմաբնույթ մտածողության տեսության կիրառության հնարավորությունը ուսուցման գործընթացում,Երևան, 2014:

5. https://escs.am/files/files/2021-05-06/114a72e4ebca1a68bcd63c2e091ccc9f.pdf ՆԶՊ

առարկայի փորձնական չափորոշիչ և ծրագրեր, (8-12-րդդասարաններ):

6. https://www.arlis.am/documentview.aspx?docid=149788

ՀՀ կառավարություն որոշում 4 փետրվարի 2021 թվականի n 136-ն ՀՀ կառավարության 2010 թվականի ապրիլի 8-ի n 439-ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

7. Лихачев Б.Т. Педагогика: курс лекций / Б.Т. Лихачев; под ред. В.А. Сластенина. — М .: Гуманитар, изд. центр ВЛАДОС, 2010.